յուխտ և երկրպագութիւն անօրինական Ս. Տեղեաց Քրիս-
տոսի ։ Եւ Գրիգոր Շղթայակիր ուրախութեամբ ձեռնար-
կեալ նորոգեաց և սպիտակացուցեալ ծեփեաց և պայծա-
ռացոյց զեկեղեցին եւ զայլ տեղիս ։ Ընդ որս և զեկեղեցի
Ս. Աստուածածնի և մատուռն Ս. Մինասայ. 'ի վանս Ասոր-
ւոց շինեաց և ոսկեզօծ փառաւոր խաչկալ Աւագ Խորա-
նի նորին , որպէս երեւի հայկական տառիւք յիշատակա-
րանն դրոշմեալ 'ի ճակատ նորա ։ Նորոգեաց զվանս Բեթ-
ղեհէմի , եւ զեկեղեցին ոսկեզօծ խաչկալիւ , որպէս ցու-
ցանէ արձանագրութիւնն 'ի վերայ նորա . եբաց դուռն
խանին 'ի կողմանէ վանաց , մաքրեալ և յարդարեալ զայն
արար եկեղեցի յանուն ամենասուրբ Երրորդութեան , որ
եւ յետոյ խանգարեցաւ . սալիւ յարդարեաց և զյատակս
վանաց , որոց սակս կրեաց վիշտս եւ տառապանս յայլազ-
գեաց և ծախեաց բազում ինչ ։

Իսկ Սեղբոս Ամիրայն , որ յԱրքունի հրովարտակս և 'ի
դատաստանական գիրս կոչի Սեղբոս որդի Մինասայ , Պաշ-
պաղիրկեան մեծի Վէզիրին եւ Թարգման Անգղիոյ դես-
պանին , այրս այս մեծահաւատ , 'ի սմին ժամանակի երե-
ւելի էր 'ի մէջ ազգին 'ի Կոստանդինուպօլիս , եւ բազմօք
ձեռնտու ազգային գործոց . արար զմեծամեծ բարու-
թիւնս ազգասիրական ոգւով , յամենայնի աջակից և օգ-
նական գտաւ երկուց Պատրիարքաց բանիւ և արդեամբք ,
առաւել եւս Աթոռոյն Երուսաղէմի . մանաւանդ յուխտա-
գնացութեան իւրում . գնեաց 'ի նաւահանգիստն Յոպպէ-
յու իջեւանատեղի (խան) մեծ , հանդերձ մթերանոցովք
եւ տամբք , որ 'ի շրջապատս նորա եւ զայլ տունս , կրը-
պակս , մթերանոցս և պարտէզն արտաքոյ քաղաքին , ուր
յետոյ ծախիւք Աթոռոյն շինեցաւ մաքրարան քառասնօ-
րեայ զգուշութեան (քարանդինայ) 'ի պէտս ուխտաւո-
րաց , որպէս յայտ առնէ զայսոսիկ հայկական արձանա-
գրութիւնն եդեալ 'ի վերայ կամարի խանին , գրեալ 'ի
թուին Հայոց 1100 , թէպէտեւ թուականն բազմօք սխալ ,
զի 'ի սոյն ժամանակի չեւ եւս էր ծնեալ Սեղբոս Ամիրա ,
եւ օրինօք դատարանի այն ամենայն կտակեալ աղքատաց
Ս. Յակոբայ ։ Եւ յեկեղեցական անօթս ընտիր երեւի յի-
շատակ նորին , գաւազանն Հայրապետական զարդարեալ